ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Արսեն Սերգեյի Օհանջանովի «Ֆինանսական հաշվի ներդրման ինստիտուցիոնալ առանձնահատկությունները և տեսամեթոդաբանական հիմնախնդիրները ՀՀ ազգային հաշիվների համակարգում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.01-«Տնտեսագիտության տեսություն և տնտեսագիտական մտքի պատմություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

1. Ատենախոսության թեմայի արդիականությունը

Թեմայի արդիականությունը պայմանավորված է ընտրված ուղղության գիտական նշանակությամբ, միջազգայնացման միտումներով, Հայաստանի Հանրապետությունում այս առնչությամբ ներկայացված գիտական վերլուծությունների և մեթոդական բնույթի հետազոտությունների սակավությամբ, թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների բացակայությամբ: Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվի ցուցանիշների ներդրումը կարող է նպաստել տնտեսական գործունեության համակողմանի հաշվառման իրականացմանը, ստվերային տնտեսության բացահայտմանը, հաշվառմանը ու կրճատմանը, ֆինանսական և ոչ ֆինանսական, տնտեսական և ոչ տնտեսական հաստատությունների (ինստիտուտների) գործունեության արդյունավետության բարձրացմանը: Տնտեսության պետական կարգավորման հարցերի հստակեցման, մակրոտնտեսական քաղաքականության մշակման և իրագործման ծրագրեր կազմելու համար շատ կարևոր է ֆինանսական հաշվի ներդրումը մակրոտնտեսական հաշիվների ամբողջականությունն ապահովելու և համալրելու տեսանկյունից:

Ֆինանսական հաշիվն ազգային հաշիվների համակարգում հաջորդական հաշիվների եզրափակիչ հաշիվն է, այն կարևոր գործիք է ֆինանսական հոսքերը վերլուծելու համար և հնարավորություն է տալիս ուսումնասիրել տնտեսական քաղաքականության ֆինանսական արդյունքները և հետևանքները:

Ազգային հաշիվների համակարգի ֆինանսական «բաղադրիչի» հանգամանալից վերլուծության հիման վրա հնարավոր է բնութագրել ՀՀ ինստիտուցիոնալ հատվածների և ենթահատվածների ներդրումային և փոխառության շարժընթացը, ակտիվների ու պարտավորությունների փոփոխությունները, ինչպես նաև ցույց տալ ֆինանսական ռեսուրսների առկայությունն ինստիտուցիոնալ հատվածում:

Ատենախոսությունը նվիրված է ազգային հաշիվների համակարգում ֆինանսական հաշվի ներդրման ընդհանրական հետազոտմանը, առկա

հիմնախնդիրների բացահայտմանն ու վերլուծությանը, ինչպես նաև ՀՀ մակրոտնտեսական հաշիվների համակարգում ֆինանսական հաշվի ներդրմանը:

Այս ամենը արդիական և պահանջված են դարձնում ուսումնասիրությունը:

2. Հետազոտության նպատակը և խնդիրները

Ատենախոսության հիմնական նպատակն է ազգային հաշիվների համակարգում ֆինանսական հաշվի ներդրման հիմնախնդիրների ուսումնասիրությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական ցուցանիշների համակարգում ֆինանսական հաշվի ներդրման առանձնահատկությունների բացահայտումը՝ համապատասխան տեսամեթոդական և գիտագործնական աշխատանքների իրականացմամբ:

Հետազոտության նպատակից բխում են ատենախոսի առաջադրված խնդիրները, որոնք հետևյալն են

- ներկայացնել ազգային հաշիվների համակարգի մակրոտնտեսագիտական բովանդակությունը,
- ուսումնասիրել ազգային հաշիվների համակարգում ֆինանսական հաշվի հիմնական բաղադատարրերի ներդրման մեթոդաբանությունը,
- վերլուծել մակրոտնտեսական ցուցանիշների համակարգում ֆինսանսական հաշվի ներդրման միջազգային փորձառությունը (որն իրականացվել է Ռուսաստանի Դաշնության և Ֆրանսիայի օրինակով),
- ներկայացնել ֆինանսական հաշվի ներդրման ինստիտուցիոնալ առանձնահատկությունները և միջազգային փորձառության տեղայնացման հիմնախնդիրները ՀՀ ազգային հաշիվների համակարգում,
- կիրառելով ֆինանսական հաշիվը որպես մակրոտնտեսական վերլուծության յուրատեսակ գործիք՝ վերլուծել Հայաստանի Հանրապետության ազգային հաշիվների համակարգը,
- կատարելով ֆինանսական հաշվի տնտեսագիտական–մաթեմատիկական վերլուծություն՝ ռեգրեսիոն-կոռելացիոն մոդելավորմամբ ներկայացնել զուտ փոխառության (զուտ վարկավորման) վրա ազդող գործոնները:

3. Հետազոտությունում ստացված արդյունքները և ատենախոսության գիտական նորույթը

Ատենախոսությունը ՀՀ ազգային հաշիվների համակարգում ֆինանսական հաշվի ներդրման տեսական, մեթոդական, ինստիտուցիոնալ կողմերի համալիր հետազոտությունն է, ինչը Հայաստանի Հանրապետությունում նմանատիպ առաջին փորձն է:

Մասնավորապես, հեղինակի կողմից գիտական նորույթն ամփոփված է հետևյալ արդյունքներում.

➢ ՀՀ ազգային հաշիվների համակարգում ֆինանսական հաշվի ներդրման գործընթացի գնահատման և գործարկման քայլաշարի հիման վրա բացահայտվել են առկա հիմնախնդիրները, ներկայացվել են դրանց լուծման հիմնարար ուղղությունները՝ հաշվի առնելով տնտեսական զարգացմամբ ինստիտուցիոնալ յուրահատկությունները և տնտեսության կառուցվածքային փոփոխությունները:

➢ ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների համակարգում ֆինանսական հաշվի ներդրման միջազգային փորձառության տեղայնացման արդյունքում մշակվել և կազմվել է ֆինանսական հաշվի ներդրման տվյալների աղբյուրների «ճանապարհային» քարտեզ:

➢ Մակրոտնտեսական տեսանկյունից, ինչպես նաև առանձին ինստիտուցիոնալ հատվածների առումով, դիտարկելով վիճակագրական ցուցանիշների բացարձակ և հարաբերական մեծությունները, դրանց կառուցվածքն ու շարժընթացը, ռեգրեսիոն-կոռելացիոն մոդելավորմամբ բացահայտվել են ՀՀ ազգային հաշիվների համակարգի զուտ փոխառության (զուտ վարկավորման) արդյունքային ցուցանիշի վրա ազդող փոխառնչելի գործոնները:

➢ Մակրոտնտեսական հաշիվների համակարգի առանձնահատկությունների հետահայաց վերլուծության հիման վրա բացահայտվել են ՀՀ ֆինանսական հոսքերի բաշխման ինստիտուցիոնալ մեխանիզմները վարկատու և փոխառու ոլորտների միջև՝ ըստ ֆինանսական գործիքների ու տնտեսության հատվածների:

4. Ատենախոսության արդյունքների գործնական և գիտական նշանակությունը:

Ատենախոսությունում ստացված գիտական արդյունքները գործածվում են և հետագայում առավել համապարփակ կարող են օգտագործվել մակրոտնտեսական հաշիվների կառավարման արդյունավետության բարձրացման, հնարավորությունների բացահայտման և կառավարման համարժեք ֆինանսական գործիքների ու մեթոդների ընտրության ու կիրառման, տնտեսությունում ֆինանսական ռեսուրսների կառավարման նպատակայնության բարձրացման և այդ ոլորտում առկա հիմնախնդիրների լուծման համար:

Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել միջազգային կազմակերպությունների, մասնավորապես՝ Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի վերլուծական և հետազոտական աշխատանքներում ՀՀ ազգային հաշիվների ֆինանսական ակտիվների և պարտավորությունների արդյունքային ցուցանիշների վերլուծության և կառավարման ընթացակարգերի արդյունավետության բարձրացման հիմնախնդրի լուծման շրջանակներում:

Ատենախոսության տեսամեթոդական և գործնական արդյունքները կարող են օգտակար լինել ԱՀՀ-ի կուտակման հաշիվներով (կապիտալի հետ

գործառնությունների հաշիվ և ֆինանսական հաշիվ) զբաղվող մասնագետների, վերլուծաբանների և հետազոտողների համար:

Ատենախոսության հեղինակի կողմից հրապարակվել է 10 (տասը) գիտական հոդված, որից 8-ը՝ ատենախոսության հիմնադրույթների և գիտական նորույթի վերաբերյալ:

5. Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլխից, եզրակացությունի և առաջարկությունների մասին, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության տեքստի ծավալը կազմում է 143 էջ, այն պարունակում է 34 աղյուսակ, 10 գծապատկեր:

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները: Ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Ազգային հաշիվների համակարգում ֆինանսական հաշվի ներդրման տեսամեթոդաբանական կողմերը» գլխում իրականացվել է ազգային հաշիվների համակարգի էության, բնութագրիչների, հիմնական մակրոտնտեսական հաշիվների ուսումնասիրություն և վերլուծություն: Դիտարկվել են մակրոտնտեսական հաշիվների հաշվեկշռող հոդվածների հաշվարկման ձևերը, սկզբունքները և փոխառնչությունները: Սույն գլխում վերլուծվել են ԱՀՀ-ում ֆինանսական հաշվի ներդրման տեսամեթոդական և ինստիտուցիոնալ առանձնահատկությունները:

Ատենախոսության երկրորդ՝ «Մակրոտնտեսական ցուցանիշների համակարգում ֆինսանսական հաշվի ներդրման միջազգային փորձառության վերլուծությունը» գլխում ներկայացվել է ԱՀՀ-ում ֆինսանսական հաշվի ներդրման միջազգային փորձառությունը, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության մակրոտնտեսական ցուցանիշների համակարգում ֆինանսական հաշվի ներդրման ինստիտուցիոնալ հատկանիշների վեր հանումն ու բացահայտումը, և Ֆրանսիայի Հանրապետության ԱՀՀ-ում ֆինանսական հաշվի ներդրման ինստիտուցիոնալ առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

Ատենախոսության երրորդ՝ «Ֆինանսական հաշվի ներդրման ինստիտուցիոնալ նշանակությունը Հայաստանի Հանրապետության ազգային հաշիվների համակարգում» գլխում իրականացվել է ՀՀ ԱՀՀ-ում ֆինանսական հաշվի ներդրման տեղեկատվության աղբյուրների, մեթոդական գնահատման, ինստիտուցիոնալ առանձնահատկությունների ուսումնասիրություն, միջազգային փորձառության տեղայնացման հիմնախնդիրների, դրանց լուծման առաջարկությունների վերհանում: Ներկայացվել է ՀՀ ֆինանսական հաշիվը որպես մակրոտնտեսական վերլուծության գործիք՝ ֆինանսական ցուցանիշների բաշման

մեխանիզմն ըստ տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների և ֆինանսական գործիքների: Գլխում կատարվել է նաև ՀՀ ԱՀՀ-ի զուտ փոխառության (զուտ վարկավորման) վրա ազդող գործոնների կապի գնահատում՝ կոռելացիոն-ռեգրեսիոն վերլուծության միջոցով:

«Եզրակացություններ և առաջարկություններ» բաժնում ներկայացվել են ատենախոսության հիմնական արդյունքները, եզրահանգումներն ու դրանցից բխող ատենախոսի առաջարկությունները:

6. Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ներկայացված ատենախոսությունը զերծ չէ թերություններից, որոնցից կցանկանայի նշել հետևյալները՝

1. Աշխատանքի նպատակում և երկրորդ գիտական նորույթում հեղինակը օգտագործում է «մակրոտնտեսական ցուցանիշների համակարգում ֆինանսական հաշվի ներդրում» հասկացությունը, ինչը ճիշտ չէ, առաջարկում եմ այն փոխարինել «ազգային հաշիվների համակարգում ֆինանսական հաշվի ներդրում» եզրույթով:

2. Ատենախոսության երկրորդ գլխում «Մակրոտնտեսական ցուցանիշների համակարգում ֆինսանսական հաշվի ներդրման միջազգային փորձառության վերլուծությունում» ուսումնասիրվել են Ռուսաստանի և Ֆրանսիայի Հանրապետության ֆինանսական հաշվի ներդրման փորձառությունը: Ընդ որում, նշված երկրների ընտրությունը հիմնավորված չէ աշխատանքում: Ուստի ցանկալի կլիներ, որ հեղինակը ներկայացներ թե հետազոտության համար ինչո՞ւ են ընտրվել հենց այս երկրները:

3. Աշխատանքը կշահեր, եթե ատենախոսության 3.1 ենթագլխում, բացի ԱՀՀ ֆինանսական հաշվից, անդրադարձ կատարվեր նաև այլ անհրաժեշտ փոփոխություններին և վերագնահատման հաշիվներին:

4. Ատենախոսության էջ 110-ում արձանագրված է. «կապիտալի հետ գործառնությունների հաշվի զուտ վարկավորումը / զուտ փոխառությունը պետք է հավասար լինի ֆինասնական հաշվի զուտ վարկավորմանը կամ զուտ փոխառությանը, սակայն գործնականում այդպես չէ»: Ցանկալի կլիներ, որ հեղինակը պարզաբաներ ֆինանսական և ոչ ֆինանսական հաշիվների անհավասարությունը:

5. Աշխատանքը կշահեր, եթե հեղինակը անդրադառնար նաև կապիտալի հետ գործառնությունների հաշվի ներդրման առանձնահատկություններին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացված դիտողություններն ունեն խրախուսական բնույթ և չեն կարող բացասական ազդեցություն թողնել հետազոտության արդյունքների վրա: Արսեն Սերգեյի Օհանջանովի ատենախոսությունն ունի տեսամեթոդական և

գիտագործնական նշանակություն, ինքնուրույն հետազոտություն է, հեղինակը լուծել է ատենախոսությունում դրված խնդիրները:

Ատենախոսության հեղինակի կողմից հրապարակվել է 10 (տասը) գիտական հոդված, որից չորսը՝ ռուսերեն և անգլերեն լեզուներով: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հրապարակած 8 (ութ) գիտական աշխատանքում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Արսեն Սերգեյի Օհանջանովի «Ֆինանսական հաշվի ներդրման ինստիտուցիոնալ առանձնահատկությունները և տեսամեթոդաբանական հիմնախնդիրները ՀՀ ազգային հաշիվների համակարգում» թեմայով թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգին և ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է Ը.00.01-«Տնտեսագիտության տեսություն և տնտեսագիտական մտքի պատմություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Է.Ն.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Տիկին Է.Ն.Մաթևոսյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ.

ԵՊՀ գիտական քարտուղար,
բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ Մ.Վ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

13 ապրիլի 2023թ.